Հայտարարվում է մրցույթ՝ <<Երևանի Աղասի Խանջյանի անվան h 53 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականության(16 դասաժամ), պատմության(18 դասաժամ), ֆիզկուլտուրայի(20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում միասին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում(ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի մասին տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն(Ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 7-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի Աղասի Խանջյանի անվան հ 53 հիմնական դպրոցում, հասցե՝ Տիգրան Մեծի 26ա: Տեղեկությունների համար զանգահարել՝(010)58-24-14,(010)56-27-64 հեռախոսահամարներով: